

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Պաշտօնական հրաւեր խաղաղութեան համար.
Պաշտօնական հաղորդագրութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏՆԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Ի՞նչ ձև ընդունել. Մեղադրողների
ժողով Թիֆլիսում. Նամակ Բորչալուի գաւա-
ռից. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
սակ Պարոնաստանից. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱՎԱՆ. Ռաշիդ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՒԵՐ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Քաղաքակիրթ աշխարհի վրա ծանրա-
ցած ահաբեկ միջոցառումները վաղուց ուժ-
գին բողոքների առարկայ էր դարձել:
Բողոքում էին հրապարակաօրէն, դիտ-
նակներով հասարակական այն դասա-
կարգերը, որոնց վրա ընկած էր զի-
նուորական անծայր ու անհաշիւ ծախսե-
րի ծանրութիւնը: Ամենքը հաւատացած
էին, որ այդպէս շարունակել չէ կարելի,
որ տարիների ընթացքում դուրս գլխով
ժողովրդի հիւժիւնը, ստեղծվում է մի ա-
ղետալի դրութիւն, որ տանում է դէպի
փրօշնական կորուստ: Այժմ այդ բողոքնե-
րին միացաւ և մի հզոր ձայն: Ռուսաս-
տանը պաշտօնապէս դիմեց պետութիւն-
ներին և առաջարկեց կազմել մի կոնֆե-
րենցիա, որ կը բնէ, թէ ի՞նչ միջոցներով
կարելի է ազատել ազգերը միջառարկի
գոյնաւորութիւններից:

Աւելորդ է բացատրել, թէ միջազգային
ի՞նչ ահագին նշանակութիւն ունի ռուսաց
կառավարութեան այս քայլը: Անշուշտ այս
մարդասիրական կոչին համակրութեամբ
կը վերաբերվի Ռուսաստանի դաշնակից
Պրանսիան. ուրեմն Եւրոպայի հզոր դաշ-
նակցութիւններից մէկը պատրաստ է խօ-
սել զինաթափման մասին: Խօսքն այժմ
պատկանում է երեքպետեան դաշնակցու-
թեան, որ ուղղված է Պրանսիայի և Ռուս-
սաստանի դէմ: Ինչու է որ Պրանսիան,
Աւստրիան և Իտալիան նոյնպէս գտն այն
եղրակացութեան, թէ յանցանք է ազգերի
հարստութիւնը վատնել զէնքեր կատարե-

լազործելու համար, մինչդեռ այդ ազգերը
հազարաւոր ցաւեր ունեն: Եւ եթէ այդ
երեք պետութիւններն էլ պատրաստակա-
նութիւն յայտնեն, Եւրոպայում այլ ևս չի
մնայ մի նշանաւոր ոյժ, որ պահպանէ մի-
ջառարկի գաղափարը:

Շատ հեռաքրքրական է, թէ ի՞նչ կասէ
Գերմանիան: Ինչպէս յայտնի է, Գերմա-
նիայում վճռել են փոխել զօրքի ամբողջ
արտադրանք, մտցնել նոր ձևեր, արագա-
ձիգ թնդանութիւն, որոնք մի քանի 18
հարուած են տալիս: Այդ նորմուտութիւ-
նը, ի հարկէ, հարկւարաւոր միջոցների
ծախս կը պահանջէ: Պրանսիան և Ռուս-
սաստանը նոյնպէս պիտի հետեւեն Գերմա-
նիայի օրինակին, նոյնպէս պիտի հարկ-
ւարաւոր միջոցներ վատնեն: Բացի դրանից,
վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս
որ Գերմանիան եկող տարի պիտի դա-
ռնալ աւելցնէ իր զօրքերի թիւը: Եւ
ահա՛ այդ տեղեկային դործունէութեան
ժամանակ լսվում է Ռուսաստանի հրաւե-
րը՝ վերջ դնել ահաբեկ ծախքերին, խղճալ
ժողովուրդները, քաղաքակրթութիւնը: Եւ
թէ երեքպետեան դաշնակցութիւնն էլ
ոգեւորվի մի և նոյն գաղափարով, եթէ
ընդհանուր բարօրութեան համար պե-
տութիւնները գտնէ այս անգամ փոխա-
դարձ զիջողութիւնների ճանապարհն ընտ-
րեն, այն ժամանակ կարելի է յուսալ, թէ
ազգերի առաջադիմութեան պատմութեան
մէջ մի նոր դարաշրջան կը բացվի և զէն-
քերի ահաւոր շաղկապի տեղ թիզաւորէ
խաղաղ ժողովուրդների հրճուանքը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Թագաւոր Վայսրի Բարձրագոյն հրամանով
արտաքին գործերի մինիստրը յանձնեց օ-
գոստոսի 12-ին օտար պետութիւնների
Պետերբուրգում գտնվող ներկայացուցիչնե-
րին հետեւեալ հաղորդագրութիւնը.

«Ընդհանուր խաղաղութեան պահպա-
նութիւնը և բոլոր ազգերի վրա ծանրա-
ցած չափազանց սպառնալիցութիւնների հը-
նարաւոր կրճատումը իրերի այժմեան վի-

ճակի մէջ այնպիսի մի նպատակ է հանդի-
սանում, որին պէտք է ձգտեն բոլոր կա-
ռավարութիւնների ջանքերը: Այդ հայե-
ցուածքը բոլորովին համապատասխանում
է Նորին Կայսերական Մեծութեան իմ
Սգոստափառ Թագաւորի մարդասէր և
վեհաձէ գիտաւորութիւններին: Այն հա-
մոզումով, որ այդպիսի մի վեհ նպատակ
համապատասխանում է բոլոր պետութիւն-
ների էական պահանջներին և օրինաւոր
ցանկութիւններին, Կայսերական կառավա-
րութիւնը ենթադրում է, որ ներկայ ժա-
մանակը շատ նպատաւոր է որոնելու մի-
ջազգային խորհրդակցութիւններով ամե-
նադրական միջոցները ապահովելու բոլոր
ազգերի համար ճշմարիտ և հաստատ խա-
ղաղութիւն և ամենից առաջ սահման
դնել ժամանակակից սպառնալիցութիւննե-
րի հետզհետէ աճող զարգացման: Վերջին
20 տարեկան ընթացքում խաղաղասիրական
ձգտումները մանաւանդ առանձին կերպով
ամրացել են լուսաւոր ազգերի գիտակցու-
թեան մէջ: Խաղաղութեան պահպանու-
թիւնը միջազգային քաղաքականութեան
նպատակն էր դրված. խաղաղութեան ա-
նունով մեծ պետութիւնները հզոր դաշ-
նակցութիւնների վերածվելին, խաղաղու-
թիւնը լաւ պահպանելու համար նրանք
շատաւորին մինչև այժմ չը տեսնված ծա-
ւալով իրանց զինուորական ոյժերը և շա-
րունակում են աւելի շատացնել կանգ
չառնելով ոչ մի դրէի առաջ: Սակայն այդ
ջանքերը մինչև այժմ չը կարողանան յան-
գել բարեբար հետեւանքների, այն է՝ ցան-
կացած խաղաղութեան. ֆինանսական ճնշ-
ւումների շարունակ աճող բեռն արմատից
խախտում է հասարակական բարեկեցու-
թիւնը: Ազգերի հոգեւոր և ֆիզիքական
ոյժերը, աշխատութիւնը և դրամագումար
խլիւղում են մեծ մասամբ բնական նշանա-
կութիւնից և ապարդիւն սպառվում են.
հարկւարաւոր միջոցներ ծախսվում են
ջնջման սարսափելի միջոցներ ձեռք բերե-
լու, որոնք այսօր հանդիսանալով գիտու-
թեան վերջին խօսքը, վաղը պէտք է կորչե-
ն իրանց գինը նոր գիւտերի պատճա-

ռով: Ժողովրդի լուսաւորութիւնը և նրա
բարեկեցութեան ու հարստութեան զարգա-
ցումն ընդհատվում է ու ուղղվում է դէ-
պի ծուռ ճանապարհ: Այդպիսով որքան
աճում են ամեն մի պետութեան սպառա-
զիւնութիւնները, նրանք աւելի քիչ են
պատասխանում առաջադրված կառավար-
չական նպատակին: Տնտեսական կազմի եղ-
ժուները, որոնք առաջ են դալիս ահա-
գին սպառնալիցութիւններից և այն մշտա-
կան վտանգը, որ կայանում է պատերազ-
մական միջոցների ահագին ամբարման
մէջ, դարձնում են մեր օրերի զինուորված
խաղաղութիւնը մի այնպիսի ճնշող ծան-
րութիւն, որ ազգերը արդէն մեծ դժուա-
րութեամբ են տանում: Աւստի անկայտ
է, որ եթէ այդ վիճակը շարունակվի, նա
ճակատագրական կերպով կը տանի դէպի
այն աղետը, որից աշխատում են խոյս տալ
և որի սարսափների դիմաց առաջուց զար-
հուրում է մարդկային միտքը: Այդ ան-
ընդհատ սպառնալիցութիւններին վերջ
դնել և ամբողջ աշխարհին սպառնացող
թշուառութեան առաջն առնող միջոցների
որոնելը—ահա այդ է այժմ բոլոր պետու-
թիւնների վսեմ պարտականութիւնը: Լըյ-
ված այդ զգացումով, Թագաւոր Վայսրը
բարեհաճեց հրամայել դիմել այն պետու-
թիւնների կառավարութիւններին, որոնք
ներկայացուցիչներ ունեն Բարձրագոյն ար-
քունքի մօտ և առաջարկել գումարել
կոնֆերենցիա այդ կարեւոր խնդրը բնե-
ւոր համար: Աստուծո՛ւ օգնութեամբ այդ
կոնֆերենցիան կարող է բարեգումակ նը-
շան լինել ապագայ դարերի համար. նա
կը միացնէ մի հզոր ամբողջութեան մէջ
բոլոր պետութիւնների ջանքերը, որոնք
անկեղծաբար ձգտում են դէպի այն, որ
ընդհանուր խաղաղութեան մեծ իրգան
յաղթանակ տանի խռովութեան և երկ-
պառակութեան ասպարէզում: Մի և նոյն
ժամանակ նա կամրայնէր նրանց համա-
ձայնութիւնը՝ ճանաչելով իրաւունքի և
արդարութեան սկզբունքները, որոնց վրա
հիմնված է պետութիւնների ապահովու-
թիւնը և ազգերի բարեկեցութիւնը:

ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ

ՌԱՇԻԳ

(Պատկեր)

Շատ տարիներ առաջ իշխում էր մեր երկ-
րում մի վայրենի ցեղ, որ պատարաւ էր մղում
պարսկների դէմ, առանց այն էլ խաղաղու-
թիւնից զուրկ մեր երկրներ էլ աւելի տալիս ու
վրա էր եղել և դարձել հարամիների, ամենա-
տեսակ զրպաղների, մարդասպանների գործ-
նէութեան աղտոտ ասպարէզ: Լեռներում և ան-
տառներում, նոյն իսկ շատ անգամ մեծ ծանա-
պարհների վրա մարդիկ զօր ցերեկով մորթու-
վում էին հաւերի պէս—կուր ժամանակ էր, ով
էր հարցնողը, ով էր ձայն բարձրացնողը: Այժմ
իրաւունք էր, օրէնքն ու արդարութիւնը կա-
տարեկան և բացառապէս էին. քաջը դարձել
և զարկվում էր իր սեփականութիւնը պաշտպա-
նելու համար, վախկոտները փախչում, թաղ էին
կենում, կամ դուրս առնում կորուստ, ուրիշ աւե-
րի ապահով երկրներ բազմ օրոնելու. դադ-
րում էին ամբողջ գիւղեր և նոյն իսկ գաւառ-
ներ՝ թողնելով և՛ ստացուածք և՛ հարստութիւն
և՛ տուն և ամեն ինչ, միմիայն կեանք փրկելու
համար. իսկ աւելի խոհեմները ստրկանում,
զլուխ էին ծուռ և հզոր առաջ և տալիս էին
բոլորը՝ ինչ պահանջվում էր իրանցից, տալիս
էին նոյն իսկ իրանց ընտանեկան և մարդկային
դատելը՝ մի ողբալի ստրկական կեանք վախե-
լու արտօնութիւնն ստանալով: Կովում էին ոչ

միայն առանձին անհատները՝ մի կնիւ, մի լաւ
ձիւ կամ կրօնական տեղութեան պատճառով,
հապա և կուռում էին գիւղը գիւղի հետ, ցեղ-
ցեղի հետ, առանց իրանց արածի համար հաշիւ
տալու, առանց պատճառը քննելու, իմանալու
Մի վայրենի, մի արիւնոծարաւ ինստիտուտ ա-
մենքին մղում էր դէպի սպանութիւն և կոտո-
րած, ամենքին առաջնորդում էր դէպի արիւն, և
լեռներից ու ձորերից արեան հոտ էր դալիս,
այդ տեղերից մենակ անցնելը հաստատ մահ-
վան դիմել էր նշանակում, և ոչ ոք այդ յան-
դերմութիւնը չուներ, մարդիկ վաղուց դադա-
րել էին գիւղից գիւղ, լեռնից լեռ գնալ: Այս-
պիսի ժամանակ էր: Կուր էր ամեն տեղ, կու-
ռում էին ամենքը, կուռում էին և այն շատ վա-
ղուց՝ բանոցից և ասիանցից:

Բանո՛ւ... մեծ չէ սա, մի փոքրիկ գիւղ է, կա-
նաչաղարդ բլրակների մէջ մի բարձրաւանդակի
վրա կուռնուած, կծկված, մեն մենակ, ըստ ե-
րեւոյթին խղճով, անպաշտպան: Որքապոչուտ ու
նեղ փողոցների աջ ու ձախ կողմերում անձն,
անհաշիւ կերպով, ասես ցրտից կծկվելով, բայց
իրօք մշտական թշնամիների երկիւղից իրար
վրա են կուռնակվել, մէջք մէջքի կայրել, կողք
կողքի տուել դիւրի մեծ ու փոքր թրճիկները,
որոնք հեռուից իրանց կոնտառան կոտորներով
փոքրիկ բլրակներին մի խմբի են նմանում խիտ
առ խիտ իրար վրա թափված: Գիւղի առջևում
իրար անդնդաւոր յաջորդող բլրակները՝ արեւմ-
տեան կողմում Մարալի գեղապարդ սարերի
կանաչապատ, ծաղկաւետ փշեղբուն են կախ-
վում: Այս բլրակների կուրքերը պատասխան
ողբերը բերելով, մերթ կորչելով և մերթ կրկն
երևան դալով՝ հոտում է Բանոնի սրբնալի լեռ-
նային գետակը, որ սկիզբն է առնում Մարալի

սարերի ստորոտներում սփռված բազմաթիւ ա-
կանակիտ աղբիւրներից, որոնք «Բազրգեան-բու-
լաղներ» են կոչվում: Գետակն օր ու գիշեր ձե-
ռում է իր կարծր ժայռոտ ափերը, փրփուր է
թրում նրանց երեսին, ահաւոր պողպատե կաղ-
մեղով ձգում է, շաշում ու շառաչում իր մերթ
վճիտ և մերթ պղտոր ալիքներով: Լաց է լի-
նում արեւօք, թէ գնալատվում, որ իր աղմկա-
լի ալիքների համար մայր երկրից խլված արա-
հետ շատ նեղ է, այդ ոչ ոք չը գիտէ. միայն
գետի ահաւոր շառաչը, նրա փրփուրն ալիքների
ստանեցուցիչ գոռոցը գիշեր թէ ցերեկ անդա-
դար հնչվում է ու հնչվում խռովելով շրջակայ-
քի խաղաղութիւնը: Ահաւոր է այդ գոռոցը մա-
նուանդ գարնանը, երբ լեռնային սահմանաւոր
ջրերն իրանց ընթացքում մեծ ու փոքր քարեր
կողոպտելով՝ սարերից ու բլուրներից, բերում
են իրանց գետը և յաղթանակով յանձնում
վարարած գետակի կատաղի ալիքներին, որոնք
գրկելով այս տարօրինակ յորը, առաջ են դը-
նում մոմաւորով: Գետակն իր աղմկալից ուռած
ջրերը շառաչելով առաջ է մղում և գիւղի հա-
րաւային կողմում սարեցուցիչ ճգփիւնով դարկ-
վում է մի հակա ուղղաձիգ քարածայրի պատ-
անդանին, զարկվում է, և կարծես կատաղե-
լով՝ որ չի կարողանում մի հարուածով փուլ
բերել, գետին հաւատարմացնել քարածայրը,
յետ է դառնում և բարկութեամբ դիմում է դէ-
պի հակառակ ափը, փորում է և ներս գնում
ցամաքի մէջ խոցան կարող է, սակայն դրանով
էլ չը գոհացած, կրկին փորձում է յետ դառ-
նալ, յարձակվել ժայռի վրա, բայց իրօք... ա-
լիքները բլում են նրան և նա իր անդր քար-
կուրթիւնը յաջորդ ալիքներին կռակելով վազում
է առաջ դարձեալ անդուստ, դարձեալ հպարտ...

Այս ջրածած քարածայրի կատարին բոլորա-
ձև շարված են մի շարք աւելի փոքր ժայռեր՝
մի հակապալան պակ կազմելով դադալի վրա,
իսկ այդ պակի հէնց կենտրոնում բարձրանում
է մի հին, շատ հին մենաստան պակաձև ժայ-
ռերով, որպէս բնական պարսպով շրջապատ-
ված: Սաբանդի Ս. Աստուածածինն է, որ
քրիստոնէական առաջին դարերի ջերմեանդ
ձեռները կռել ու կոփել են վիթխարի քարերից
և բարձրացրել են հակապալան կամարներից
այս ահաւոր ժայռի կատարին՝ այս բարձրութիւնից
դէպի երկինքն ուղղելու իրանց սրտաբուլի ա-
ղօթքները: Բայց աւելաւ և անփառունակ է
այժմ հինաւոր տաճարը և անցեալ փառքի
այս տիտղոս մնացորդները, բարձրից կախված
գետակի ջրերի վրա, ցրտում են նրանց վճիտ
ալիքներում, դիտում են այնտեղ իրանց տիտղոս
պատկերը և իրար հորդ-հրշոյող ալիքների ըն-
թացքում կասեւ կարգում են աշխարհի ունայ-
նութեան, աշխարհի անցատուրութեան անսիրտ,
անողորմ փրկութեամբութիւնը: Բարձր է քարա-
ծայրը, բայց էլ աւելի բարձր է նրա լեռի
կատարին ցցված աւերակ մենաստանը. դուռա-
րին է վերելքը դէպի այդ սրբավայրը. լեռնային
մի նեղ, զրոյապոչուտ շաւիղ ջերմեանդ ուն-
տաւորին առաջնորդում է դէպի վեր, դէպի
կատարը: Այդ շաւիղը իր ընթացքում մերթ
իջնում է հեղեղների փորած խռոչները, մերթ
ժաժկվում է մնացառուների մէջ, մերթ դէմ է
առնում մի ահագին ժայռի և պէտք է լինում
կրեմն չանգուելով բարձրանալ, երբեմն սողալ
կամ քարերից բռնել կատարի սրբավայրը հա-
մբուրելու համար:

Ոչ ոք չը գիտէ, թէ ով և երբ է կառուցել
տաճարը և որ անարգ ձեռներն են կողոպտել և

ԻՆՉ ՁԵՒ ԸՆԴՈՒՆԵԼ

Նվթէ մինչև այժմ մի քանի ազատ հոգեբանական յայտնաբերումներ կ'ենթարկուին իրականացմանը, որոնցից չափով, իրագործվում էր, կարելի էր ունենալ հարմարեցված երկրագործությունների արհեստի կատարելագործություններ, իսկ այդուհետև, զղի սահմանները այլ ևս չէին հարձակվելու, պէտք չէր հաղական դատակարարի ուշ ու միտքը ուղղելու անհրաժեշտության եղանակների բարուրդը կատարելագործությունները: Ճշմարիտ է, անհրաժեշտ էր դժուար է, պահանջում է փորձեր, բայց անհրաժեշտություն չէ, միակ ուղին է, որ պարելով է մաքարի ժողովրդական աղբյուրներից զգալ: Ուստի պէտք է նրան հիմքը

Սպորտուհի 15-ին, չաբախ օրը, բացվեց թի-
սում մեղոն աբու ծակահան ժողով,
կեց չորս օր ե փակվեց երէկ, օգոստոս-
ին, երեկոյեան ժամը 6-ին: Թորովը բանալ-
օֆէսօր Կլարէնայի յայտնեց, որ կովկասե-
ղովի համար պէտք է ընտրել համակարան-
նորվեց Վ. Գէկովիկ, որ և ղեկավարեց ժողո-

Այս աւերակ մենաստանի, այս բարձր քարա-
պարի ստորոտներում ձգվում է մի լեռնային
կարծաւ հովիտ, որ հեռուէն եզերվում է զե-
անկար լեռնաշղթայով: Այս լեռնաշղթայի միւ-
ողումն ապրում են վրանաքանակ ասիաների
մանուկ պարտւոր արնախում թշնամիները:
Եւս օրից, երբ բանոցից մաճն ու գոթանը
եքք առաւ, պատուեց մայր երկրի սկրքը, ո-
ղեց նրան իր բրտիւրով և իր պաշտելի
ամբար արդար հաց պատրաստեց, իսկ ասիան-
ն արձամբարձելով պղպիսի հալալ ախառաթ
ը, կպաւ իր նոցրի թիկունքին և մահաւոր
էջերով գնաց կողորդել յանձն առնելի:

04000000 16-ին

ձանք, արևմտո արկածներով լի մի կհանվե, այն օրից, երբ բանտցյւն ըարով ու ցեղով չաբեց իր բնակարանը և մտաւ խաղաղ յարկի տակ, իսկ ասիանցյւն գերադասեց մազէ վրանի անշանդիտ և անհատատ կենալը, այն օրից, երբ բանտցյւն զրկեց աշխարհի Փրկչի խաչը, կրակեց նրան իր բոլոր յոյսերն ու իշխանը, իսկ ասիանցյւն մի վայրենի, արհւնձաճարաւ կթոն պաշտել սկսեց, այն օրից էլ կռիւն սկսվեց բանտնցու և ասիանցու մէջ, կռիւ անհաշտ ու բարատեւ Օ՛, այն ժամանակից որքան արիւն է թափվել Սարալայ ոսարերում, Բազրդեհան-բու-լադնցի կմիտ ջրերում...

Եւ բանտնոցն երբէք զլուխ չի խոնարհել աւստիանցու առած, և նրանից փախուստ չի տուել. աստիանցու գնդակները բանտնոց կրծքն են դրակ և ոչ թիկունքն: Ո՛ր աստիանից կը հաճախակա՛ն ախառտով կերպով խելը բանտնոց չիխարը, եղը, կովը, տորըն նրա արուը, չի-մանը. բանտնոցն ստեղծված է աստիանցուց վը-նէքմանդիը լինելու համար, այդպիսի դէպքերում ա միշտ կրկնապատիկը յետ կը բերի: Բանտն-ի արխանդուր դաւանները երբէք թոյլ չեն տուել, որ իրանց հայրենի գիւղին անառգանք ասանի, իրանց մարդկային կամ ընտանեկան դատուն արատաւորվի: Սեփական յարկի տակ առաջադրութեամբ են իրանց հողին փչել, թէ՛ ի-նչ հայրենի միջոց լեռններում ընկել են զարկվելով ինչո՛ւնացել միտք ան անողորմ, մի անհաշտ կուր-տակել իրանց գաւառներին ընդդէմ աստիանոցն-երի: Եւ. Բանտնի մէջ միշտ հարվել է ուկը, և ի վառ է պահել աւանդական վըլժմանդու-տան սքաւան հուրը, կանգուն և կենդանի անապոյսան արեւ. որ անհատապէս ինչ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Օգոստոսի 13-ին

Օգոստոսի 12-ին, ղերասանական խմբի XIV
երկրաչափում էր՝ Նապատ պ. Պետրոսեանի:
Պաղպղկե մի-մի գործողութիւն Համալեւոյից և
Օտարոյից, և Օտարոյի գործադրութիւն» վո-
լը վրէ: Պ. Պետրոսեան արժանի է վարձատրու-
եան: Նրան երբ պարտաւորն, որ այս ամառ
եղ, շուշկեյնեբիս, վիճակվեց ունենայ հայ դե-
սասաններ խումբ, և հանդիսատես եղանք մի
արք զոհացուցիչ երկրաչափների: Գուցէ հէնց
այդ հանդամանքն էր թուն պատճառը, որ մեր
նաորտաւէր հասարակութիւնն շտապեց երեք
որ առաջ տուան վերցնել, բենիֆիցիւտարն
նաորտեղո Նապատով: Իրեն համակրութեան
երտայադրութիւն, հասարակութիւնը բարեհաճեց
նշուղէս այդ երեկոյ վարձատրել պ. Պետրոսեա-
նին 200 բուբլի դրամական ընծայով և մի պատ-
ով: Մեր հասարակութեան այդ սիրալիր վար-
քները արժանի է շնորհակալութեան: Ներկա-
պեման անսամբլի ժաման ոչինչ չենք կարող ա-
ել, քանի որ, ղերասանի խաղի ոյժը որ և է

Դարձեալ կրու է: Պարսկներն ու օսմանցի-
րը զարկվում են իրար և ասիանցիները օգտ-
ւով երկրի խառնակ դրութիւնից, ատամ են
տում Բանինի վրա, միջոց են փնտռում քա-
քանդ անելու իրանց մի բռնուն թշնամիների
դ թոյնը, որպէս զի մենակ տիրեն Մարալի
բերելին: Երգարուստ-բնաշխներն, բայց Կա-
սին այս անգամ էլ անգործ, անապատայն Բա-

Պաշխոյ... Այսպէս սիրեցին անուանել նրան
անոնցի ջանէլ աղբիկները եւ այդ անունը եր-
ցին ու գովաբանեցին իրանց անպսոճն, բայց
տաղալիք եղեկերուն Նա գիւղի քահանայի՝ Տէր-
աբոյրի որդի Քորոսուն էր, բայց այն օրվանից,
գիր ճերմակի ականջը մտած, հրացանն ուսին
ընտել տարածեց վայրենի չրճակալքում, երբ
ու շնչոտակի գնդակների տակ ամայի լեռնե-
ւ թաւաղլոր ընկան անօրէն հարածները,
ու՝ օրվանից իրեցու տղայ Քորոսը Ռաշիլ
ընտել Բարձրաճատակ ու թիկնուէտ, գանդ-
նեք զլիտլ, միշտ ուրախ, ժպտուն եւ թուխ
լըտլ, մեծ, փայլուն եւ կարորաւուն աչքերով
եղբորտաւորը իր հայրենի տաբերի հերոսն
երբ իր ճերմակի վրա նստած, կեռ թուրը
լըքին քաշ ձգած, երկայն ճօճուն նիզակը ձեռ-
ն, փայլուն հրացանն ուսին անցնում էր ա-
տր լեռներից, միթիւ ու խուլ ձորերից, ուր նա
մենակ սրսի էր զուրս գալիս անվախ ու
հարձակ մի պաշտելի յանդգնութեամբ։ Ան-
ընդ էր նա այդ ժամանակ։ Քանիք քանի գե-
նիները սրտուն Էին բարբառում նրա սիրոյ
հար, քանիսն էին իրանց մօրքով զլուինները
տալ տալիս նրա գնացած ճանապարհին, հէյ-
տեւ Բ. Բ.

պիեսի մի գործողութիւնով չափեւ եւ ըստ այժմ հաշտանալ չէ կարելի: Համէէ աւելի խաղացվեց նորա՝ Օթելլոյի (օր. Վարդիթեր) եւ Համէտի (պ. Պետրոսեան) տեսակցութեան տեսարանը, ուր կատարվում է Վինել իէ չը լինել» մեղա-խօսութիւնը եւ երկրորդ՝ այն տեսարանը, ուր Համէտը խօսակցութիւն ունենալով իր մօ (տիկ. Ջաքէ) հետ, յանդիմանում է նրա ապօրինի կենսակցութիւնը՝ իր հօրեղբոր հետ: Ստեղծ-ւոր-ից խաղացուեց III գործողութիւնը, ուր Եւ-գեն (պ. Յարութիւնեան) կասկածներ է դար-կեցնում Ինզղէմնայի (օր. Վարդիթեր) վերա-բերմամբ Օտելլոյի (պ. Պետրոսեան) սրտում: Անհամեստութիւն համարել Պետրոսեանի պար-մունքը՝ Համէտի դերում դուր գալու համար, իրաւունք չկեք համարում. մենք այն կար-ծիքի ենք, որ ամեն մի դերասան, եթէ վստա-նալով իւր ունի իր ոյժերի վրա, կարող է դուրս գալ եւ իր ոյժերը փութել համապատասխան դերերում: Սակայն թող ներկա մեզ ասել, որ Համէտ խաղը ցոյց տուցե, որ դեռ ևս հար-կաւոր է պարունին նուրբ կերպով ուսումնասի-ւել Համէտի բնաւորութիւնը, նրա հոգեբանա-կան կողմերը: Ստեղծի միայն մի գործողու-թիւնը խաղալով՝ պ. Պետրոսեան համոզեց, որ այդ պիեսն ամբողջապէս դնելով այդ երեկոյ՝ ասելի խեղացիութիւն արած կը լինէր եւ Օտել-լոյի դերում տալաւորութիւն կը թողնէր հանդի-ւոր պ. Պետրոսեան եւ Սամվարկոսեան չխնայել խաղացին եւ իրանց խաղով հասարակութեան ունէն ծիծաղ պատճախեցին: Աւելորդ չենք հա-ւարում նկատել, որ այդ երեկոյ ներկայացումից հետոյ նշանակած պարերը մասամբ նսեմացնում են բենեֆիկիատի յարգանքը, ըսնի որ, ա-նանց այդ բէկլամի էլ, հասարակութիւնը սիրով ու վերաբերվէր բենեֆիկին: Ի դէպ, ինչպէս տում ենք, Բազուի թատրոնական մասնախումբը բարեհաճեց առաջիկայ սեզոնի համար նրա-նայն պ. Պետրոսեանին: Պատճառը մեզ օրինա-ւոր

Նոր-Նախիջևան, օգոստոսի 12-ին

Նոր-Նախիջևան, օգոստոսի 12-ին
Պ. Գևորգ Զաքարեան, որի դատի մասին
էր առաջին խօսել էինք, նուիրում է մեզ
«Рязовский Край» լրատու մի ամբողջ ֆինե-
նական Պարբերականին անդամական է և պըն-
դույն, որ օպոլիտայի պարագլուխը ինքն է ե-
լ և ոչ պ. Յարուխանովը՝ ախարաբի է ա-
ղադրանքներ, որ ինքը միայն սուրբ ճշմար-
տութիւնն է քարոզել և աղին մարդ է,
իկ մենք ընդդիմացի ենք ճշմարտութեան, ան-
հրիւր է մի վերջոյ անհամ ախարալուծիւն-
ն է անում մեր աղապարտութեան մասին, ի
բրեկ յայտնի նպատակով (երևում է որ պարտե-
ւ ուսումնասիր րա ձ է «Московскія Вѣдомос-
տ» ուղղութիւնը և ուրին):

հենք պնդեցինք, և պնդում ենք, որ օպոզի-
ան կողմ կըքերով է սկսվել: Դ. Չուբա-
ան հեքքում է այդ, բայց անկարող լինելով

ապրեք էր դէպի իրան ուղղած բուրբուլած,
ոտատու հայեաքքները և դրանցից ցոլացող
այդ կայծերն անկարող էին լինում լծափա-
նայ փառաւոր տղամարդի շրտը: Գրեթէ
ենքն էլ զարմացած էին, կանանց ջըջմը
փստում էր, բայց և այնպէս ոչ ոք չէ դիտէր,
որ բախտատուին է պատկանում Բանինի ա-
նը: Երկուստարդի, իրիցու տղայ Ռաշիկի

—Ուաշիդ ջան, հէյրան եմ քե, կրկնում էր յա-
ն պառաւ մայրը, ապա եփ տի պարով խէ-
քեօ կանանչ կարմիր կապենք, խալխորար,
:

Սակ ձերունի Տէր-Մարութը այսպիսի ժա-
նակ սովորաբար իսկոյն կաւելացնէր հեզնու-
ամբ:

— Ի՞նչ կասես, քան կնիկ, խօքուղ մեղք մ'անես,
ն էջես գինայ, որ մեր Ռաշխը վարդապետ
նկի:

աշխույժ աշակերտ դեպքերում կամ աշխատում
մօր հարցասիրության հետ բաժանությունների
հանապնդելով, կամ առում էր, թէ աղյծի է
բուսում, որ նշանվի, բայց իսկոյն դրանից յե-
ղուրս էր գնում տանից և մտախոհ, տխուր
գով թափառում էր դաշտերն ու սարերը
էլ էր, որ իր ամուսնութեան մասին խօսակ-
ցիւնը ամեն անգամ լցնում էր նրա սիրտը
նույնութեամբ, յարուցանում էր նրա մէջ տը-
ն յիշգրտութիւններ, որոնք մտայնում էին նրա
ուն հակառու: Նա տանջվում էր, որովհետեւ
նա էր և տոկոսված էր թաղցնել իր սէրը ոչ
նա ծնողներին, ոչ միայն հայրենի դիւրկից,
այլ իսկ ամբողջ աշխարհին:

(Կը շարունակվի)

ըրեւ այն փաստերը, որ մենք բերել ենք «Աշա-
կի» մէջ, ամենամանրամասն լուծում է այդ
փաստերի մասին: Բաւական է ինձ ասել, որ
պ. Պալապանեան մեղադրում էր պ. Չուբարեան-
ին թէ հաշտարար դատարանի առաջ, թէ նա-
հանգական դատարանում: Վարդ էր արդեօք
պ. Չուբարեան լինել անկողնիստ, անհաշտ
նշ երբէք: Նա ասում է, որ զբիւլ է միայն
ս ու լ լ ը ճ ճ մ ար ու ո լ թ ի լ ը: Որպիսի ան-
համ ծաղր սրբութեան և ճշմարտութեան վրա:
Տալով սուրբ ճշմարտութիւն էր պ. Չուբարեանի
գրածը «Աղբատաց» չէր: Իմանալով միայն, որ
միթ է սուրբ ճշմարտութիւն էր ընդհանուր ժո-
ղովում յանդիմանելով բացակայ սրբական ա-
ռաջնորդին և հեզօրէն անուանելով նրան «պա-
րոն առաջնորդ», հակառակ կանոնադրութեան
պնդել, որ երկրորդ ժողովը կանոնաւոր է, թէ
լինեն տաս ծիսականներ: Միթէ սուրբ ճշմար-
տութիւն էր քարոզել և աշխատել միայն, որ
ժողովները չը կայանան, «Враховывая Крэй» լը-
րագրում անվերջ հեքեքներ գրել «Աղբատաց
հոգաբարձութեան» գործերի և գործողների մա-
սին, գրել վարդ հոգաբարձութեան և վնասել,
որպէս զի վնասով և պ. Պալապանեան: Միթէ
սուրբ ճշմարտութիւն էր ինկարել և խոնարհ-
վել հանգուցեալ Աճեմանի կողմակաւոր պ.
Յարութիւնով առաջ, պնդելով, որ այդ պարո-
նի չնորհի գոյութիւն ունի նոյն իսկ հոգաբար-
ձութիւնը: Հարկաւորութիւն կայ արդեօք մեզ
միտնել և ապացուցանել, որ ուրիշ բան է պ.
Յարութիւնով լրագրում գովել պ. Յարութիւն-
ովին, ստանալով վարձատրութիւն նոյն իսկ պ.
Յարութիւնովին, և ուրիշ բան, ոչ, բոլորովին ուրիշ
բան է՝ սուրբ ճշմարտութեան արեւ. զգացմուն-
քը: Եւ այստեղի հայ հասարակութիւնը լաւ գի-
տէր, որ պ. Չուբարեան դարձել է խաղաղ-
ութիւնների ձեռքում և նրա գործիւններին կա-
րեւորութիւն երբեք տուած չէ: Հայ հասարակու-
թիւնը ի մօտայ ճանաչում է պ. Չուբարեանին:
Դա երբեմն ճանաչում էր և մենք բոլորս յի-
շում ենք, որ երբ պարոնի սկսում էր խօսել,
ճանաչողները և հասարակութիւնը սկսում էին
ծիծաղել: Այո, պ. Չուբարեան միշտ ունէր իր
յատուկ կոմիկեան emploi: Այժմ պարոնը վի-
րաւորված է, որ ես նրան չեմ ճանաչում և ին-
դուում օպօզիցիայի պարագլուխ: Նա վիրա-
ւորված է և աշխատում է վիրաւորել: Անոյն
աշխատանք:

Բայց մենք իշում ենք ի դէպ և մի ուրիշ
փաստ, որը գուցէ մոռացել է պ. Չուբարեան:
Վերջինս երբեք հարկը բուրձով յանձն առած էր
գրել պ. Պալապանեանի պատմութիւնը: Եւ ա-
նա, տեսէ՛ք, ձայնի աւուր-Չուբարեան գը-
րում է այդ աշխատութիւնը (հաւատում ենք,
բերն ս ու լ լ ը ճ ճ մ ար ու ո լ թ ի լ ը, պ. Չու-
բարեան տեսնելով), իսկ պ. ը ա ղ ա ղ ա-
գ լ ո լ ի Պալապանեան, իրեն վաճառական,
տալիս է միայն հարկը բուրձով, խոստանալով,
որ դուքան կը տայ միաբարձր և կը տպագրէ
այդ աշխատութիւնը: Գոմայի մէջ մենք ա-
ռաքելեցինք, թէ հարկաւորութիւն չը կայ տպե-
լու քաղաքային հաշուով պ. Պալապանեանի պատ-
մութիւնը: Դուքան մեզ հետ ճամաճանվելը: Պ.
Չուբարեան, չը ստանալով քաղաքային վարչու-
թիւնից երկու հարկը բուրձով, գիմում է նորից
պ. Պալապանեանին, բայց վերջինս նորից մեք-
ծում է պարոնի խնդիրը: Մենք չը գիտենք, ի
հարկի, արդեօք այդ մեքծման իսկ օրից պ.
Չուբարեան իրան ճամաճում է օպօզիցիայի պա-
րագլուխ թէ ոչ, բայց և այնպէս մենք երբեք
կարեւորութիւն տուած չենք այն հանգամանքին,
որ պ. Պալապանեանի պատմարան Չուբարեա-
նը, որ հիացած գովում էր քաղաքագլուխի գոր-
ծակցութիւնը, յանկարծ ելաւ հրապարակ հա-
տատելու, որ նոյն պ. Պալապանեան—գուցէ
եւ դեռեք լինու մենք չենք տեսել ոչ մի կարե-
ւորութիւն այդ հանգամանքին—հէնց նրա
համար, որ այդ տեսակ փոփոխա-
մանութիւնը մենք համարել ենք պ.
Չուբարեանի կոմիկեան emploi-ի յատ-
կութիւններից միւրը... Եւ մենք մինչև
այժմ կարծում ենք, որ չենք սխալվել...

Գր. Չալսուչեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԻՆ

Մեզ հեռագրում են Եւրոպայի, օգոստոսի 16-ից.
«Այսօր առաւօտեան այստեղ հասաւ ամենայն
Հայոց Վաթիկանը: Ընդունելութիւնը հանդիսա-
ւոր էր»:

Մեզ հեռագրում են Աստանալից, օգոստոս-
ի 16-ից. «Այսօր տեղի ունեցաւ հայոց Նորա-
չէն ս. Գէորգ եկեղեցու օծումը: Ներկայ էր մեծ
քաղմութիւն»:

Կ. Պոլսից «Новое Время» լրագրի թղթակիցը
գրում է. «Հայ գաղթականների վերադարձի մա-
սին մեր կառավարութեան կողմից առաջար-
կած բոլոր միջոցները Բ. Դուռն ընդունեց:
Կը նշանակվի մի աւանձին կոմիսար, սահմանն
անցնելու բոլոր դժուարութիւնները վերացվում
են: Այս քանի օրը միլիտարների խորհրդում
ընկնում էր հայկական կոմիսարին տալիք հրա-
հանգները ծրագրելը, որոնց մշակված են մեր
դեսպանութեան պահանջների համաձայն: Ինչ-
պէս ինձ յայտնեց արտաքին գործերի ընդհա-
նուր քարտուղար Նուրի-բէյ, այդ հրահանգների
ծրագրերը անցաւ առանց հակահառութիւնների:

Մի քանի դժուարութիւններ կարող են ծագել
միայն հայերին իրանց նախկին տեղերում բը-
նակեցնելու ժամանակ: Նրանց պատկանած հո-
ղերը վաղուց գրաւել են քրդերը: Ինչպէս յայտ-
նի է, թիւրքաց խնամութիւնը քրդերի վրա ա-
նուանական է: Երկր հայերին նոր հողաբաժիններ
կը տան, որովհետեւ հողեր չառ կան: Խոստա-
ցել են նոյնպէս նախկին օսմանդակութիւն.
օգնութիւն տներ կառուցանելու լաւ ցեղի տա-
ւար տալ: Լաւ կը լինէր, եթէ իրապէս այս բո-
լորը կատարվէր» Այո, շատ լաւ կը լինէր:
Թիւրքայի խոստումներէից միշտ և ամեն ժամա-
նակ մեզը ու կարագ է կախել...

Օգոստոսի 12-ին Գանձակի գաւառում, Հաջի-
բեկ ամառանոցից մի քանի վերստ հեռու, տեղի
ունեցաւ աւաղակների մի անսովոր յարձակում
ճանապարհորդների վրա, մէկը այն յարձակու-
մանից, որոնք առասպելական քնադրութիւն են
տալիս մեր թուրք աւաղակներին և աննկարա-
գրելի երկիւղ տարածում ազգաբնակչութեան
վրա: Աւաղակները թուլ 9 հողի էին,—բոլորն
էլ թուրքեր: Դրանցից երկուսը բլրի վրա պա-
ռւմ մերձակայ Կարցիլո ռուսաց զինուոր տանու-
տէրին, եկաւ Նոյնիս, ցուցակարեց հայոց
փակված զորքի բոլոր կայքը և գոյքը: Հետե-
ւեալ օրը, օգոստոսի 1-ին, ժողովի հրաւիրեց
15-ի չափ ծխականներ և յարգրեց նրանց զինուոր
անել զորքը բանալու համար:

ԲՐՈՋԱԼՈՒԻ գաւառի Ծալկա կոչված չրջա-
նից մեզ հաղորդում են. «Այս տարի հացահատիկ-
ների հունձը աղու է: Փոքր ինչ անբաւարար են
Ղուչի, Զինիս և Կարսի զինուորի
ցանքները, որովհետեւ խոնավութեան պատճա-
ռով մեծ քանակութեամբ զարգացել է զիւծ ցո-
րեն կոչված բոլոր, որի հատիկները քուն են
առաջացնում և ուժից գցում զինուորայիններին:
Թէ և քանակաւ մեքենաներով այդ ցորենը մաք-
րում է այդ բոյսի հատիկից, բայց ցորենի քա-
նից ամեն զինուորային հարաւորութիւն չունի մե-
քենայ գործածելը»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Բագրի ճանա-
պարհին անցեալ շաբաթ երեսը մի աւաղակա-
յին խումբ, որը, ինչպէս այստեղ հաւատա-
ցնում են, կողոպտել է երկու ֆուրգոն: Երկու
կար, որ պատն էլ կողոպտելին, սակայն նա-
խազգուշացնող միջոցներ ձեռք առան, մի օրով ուշ
ուղարկելով և ճանապարհի վրա զինուորների թիւ-
աւելացնելով»:

ՍՂՆԱԻՑ մեզ գրում են. «Ձը նախկին, որ
Սղնալի գաւառում հացահատիկների բերքը ա-
ռաւ էր, այնու ամենայնիս վերքը շատ բարձր
են: Յորեն ծախվում է պուրը 80 կոպ., գարին
55 կ. և կորեկը՝ 28 կոպէկ: Գների բարձրանա-
լու վրա ազդեց այն հանգամանքը, որ Ձաքա-
թալի գաւառում այս տարի պակաս բերք լինե-
լու, մեծ քանակութեամբ Սղնալի գաւառից
արտահանվում է Ձաքաթալա ցորեն, գարի և
կորեկ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Ռ ա շ տ, օգոստոսի 6-ին

Հայկական կենդանի միջամտման թմրած է
այստեղ. երկր ամառային արեւի և տաքութեան
ազդեցութիւնից՝ ոչ ոք ոչ մի բանի մասին չէ
մտածում: Գուցէ «Մալի» ընթերցողները կար-
դացած կը լինեն, որ մենք ունենք ընկերու-
թիւններ, դպրոցներ, հոգաբարձութիւն և այլն և
այլն, բայց դադարաւ շատ քիչ ունեն դրանց
մասին: Անս մի թեթիւ գաղափար տանք:

«Թաւերա սիրած ընկերութիւն» ու-
նենք. այդ ընկերութիւնը շատ հին է, աւելի
քան 10 տարի: Տարվա ընթացքում մի կամ
երկու ներկայացում է տալիս, սովորաբար թէ
գոյնով և թէ խաթրով ծախվում է, մուտքը
բաւարար է լինում և մինչև այժմ էլ լուծւ ենք,
թէ նա դրամապուր ունի, բայց թէ ում մօտ է
այդ դրամապուր, ինչի վրա է գործադրում,
ոչ հաշիւ տեսնել կայ և ոչ հաշիւ տուլ: Եւ
այդ պատճառով ամեն տեսակ անախտ լուրեր
են պտրտում այդ փողերի մասին... Թէ որքան
ճշմարիտ են այդ լուրերը, չը գիտենք: Սակայն
իրաւունք ունի ամեն մէկն այդպէս կարծելու,
քանի որ հաշիւ չէ տրվում և հասարակութիւնը
ոչինչ չէ իմանում: Ընթերցարան-գրադարա-
նի ընկերութիւնը ևս նոյնքան հին է, որ-
քան «Թաւերասիրած ընկերութիւնը»: Նախկին
տարիներում այդ ընկերութեան վարչութիւնն
աշխատում էր կանոնաւոր դրութեան մէջ պա-
հել գրադարան-ընթերցարանը՝ բազմացնելով լը-

րագրեր, գրքեր և դրամապուր կազմել ապա-
գայում շինութիւն շինել տալու համար: Պէտք
է խոստովանել, որ բաւական նախանձելի դրու-
թեան մէջ էր, ունի բաւական թույլ գրքեր,
ստանում էր 10-ից ասելի լրագրեր իբրեւ
նուէր, և կարողացաւ մի թեթիւ դրամապուր
կազմել, որը գտնվում էր այն գանձապահ մօտ,
որ վերջերս ինքնասպանութիւն գործեց: Իսկ
այժմ ինչ է ներկայացնում այդ ընկերութիւնը,
—բոլոր անդամները ցրվեցին և մի պարոն, որի
ձեռքումն են գործերը, ոչ հաշիւներն է ներկա-
յացնում, ոչ ընթերցարանը յանձնում, և ոչ
իսկ պահանջող կայ: Բաւական է, որ երկու
տարի է արդէն ընթերցարան-գրադարանի դրու-
նեքը փակել են: Գրքեր և լրագրեր խառն ի
խառն հաւաքած լցրած է մի ինչ որ քարվան-
սարայի սենեակի մէջ, թողի և միներ իկրա-
կուր: Մինչև այժմ ստացվում են բարեբար ան-
ձերկի նուիրված գրքեր կամ լրագրեր, բայց թէ
ինչ են լինում, ով է տոնում, այդ Աստուած գի-
տէ... ոչ հետաքրքրող կայ և ոչ պահանջող: «Ա-
նանց ընկերութեան» գոյութիւնը մի տա-
րուց աւելի չէ, նա նպատակ էր դրել ստորագրու-
թեամբ մի դրամապուր կազմել և այնուհետեւ
գործադրութեան մասին մտածել: Սրտով կայան
գործին տրվելները, անդամահներ ընտրեցին,
ստորագրութիւններ ժողովեցին: Բայց ինչ եղաւ,
ով հետեւեց այնուհետեւ, և ոչ ոք. այնպէս որ
մինչև այժմ այդ անդամավաճարներն չեն հաւա-
քել, գործող չը կայ. միայն տրվել Տէր-Օհա-
նեսից Բագրում եղած ժամանակ իր ծանօթների
չրջանում յօդուտ այդ ընկերութեան հանդանա-
կել է 500 բուրձ չափ մի գումար: Կարծում
ենք ժամանակ է գործելու:

Իսկ ինչ է անում մեր դպրոցի հոգաբար-
ձութիւնը, գուցէ կը հետաքրքրվեն շատերը:
Նա բաւականացել է միայն նախկին ուսուցչին
և ուսուցչուհուն շատ վաղուց, դեռ քննութիւն-
ներից մի ամիս առաջ՝ վարձել ուսնիկ աւելա-
ցնելով, և անս դրանով վերջացել է նրա գործու-
նեութիւնը: Իսկ նախահաշիւ մասին մտածել
հարկաւոր չէ. ինչ կայ, սովոր են ուսուցչներին
ամիսներով սպասեցնել տալ, ուսնիկը կտրել,
կամ թէ չէ ուսուցիչը ինքը կամ «Աւետիս» ման
կը գալ և կամ յօդուտ դպրոցի մի ներկայացում
կը տալ և իր ուսնիկը կտաւանայ. իսկ եթէ այդ
էլ չը լինի ուսնիկից կը կտրեն, ինչպէս նախ-
կին ուսուցչներին հետ արեցին: Թող դուք ան-
գաղտնի, նրանք սովոր են այդպիսի գան-
գատներին ուշ չը դարձնել: Նախկին ուսուցչի-
ներն էլ անա երբորդ տարին է, որ չեն կարո-
ղանում ստանալ իրանց ուսնիկի մնացորդը: Քա-
նի բանի տարի է մի ինչ որ պարոնի մօտ
գտնվում են գրքերի, տոմարների և այլն և
այլն հաշիւներ, ինչու չէ պահանջում հոգաբար-
ձութիւնը: Անս երբորդ տարին է, որ վիճակա-
հանութեան տոմարներ են ծախված. փողերն
ստացվել է և ծախվել, իսկ վիճակահանութիւնը
մոռացվել: Այս էլ մեր հոգաբարձութիւնը: Դեռ
լաւ էր, որ դուք եկաւ մի բարի մարդ և դըպ-
րոցը շինել է տալիս իր հաշուով, ապա թէ ոչ,
այդ էլ մեր անպարտ հոգաբարձութեան մի մեծ
ցաւ պիտի պատճառէր: Առ այժմ այսքան

Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Այժմ ամերիկայիցները պատվում են իրանց
հերոսներին: Սամիսոնի նուառորում գնաց Նիւ-
Եորկ և ընդունվեց սաստիկ ոգևորութեամբ:
Նա երբ թնդանօթաձգութեամբ ուղևորեցին
Գրանտ նախագահի գերեզմանը և ապա ժողից
անցան Հուդսոն գետը. գետեզերին, կտուրների
վրա խմբված էր միլիոնաւոր բազմութիւն: Բո-
լոր մարտկոցները թնդանօթներով ուղևորեցին
նաւերը, եկեղեցիները դանդաղեցրել հնչում էին
անդադար և լսվում էր ազգային հիմնը: Նիւ-
Եորկի մէջ գնաց ծովապետի նաւը և մատու-
ցեց Սամիսոնին ու նրա օֆիցերներին պատ-
ւաւոր քաղաքացու դիպում: Սամիսոն բացի
դրանից բազմաթիւ ընծաներ է ստանում մաս-
նաւոր անձնիքներից: Նախագահ Մակ-Կինլէյ
նշանակեց զօրքի և նաւատորմի առաջնորդնե-
րին դրամական խնջր ընծաներ պետական
գանձարանից:

—Իերմանական լրագրներին հեռագրում են
Կ. Պոլսից. «Արժանաւատ արդիւրից հաղոր-
դում են, որ վերջին ժամանակ Սուլթանի և
պարսից Շահի մէջ մտքերի եռանդուն փոխա-
նակութիւն տեղի ունէր, որի պատճառով վերջ-
նականապէս վճռվեց, որ Շահը կը դիմայ Կ.
Պոլս»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Այլքսանդր II-ի արձանի բացումը

ՄՈՍԿՎԱ, 15 օգոստոսի: Նոյն պայմաններին
Մեծութիւնները Մոսկվայում մնալու օրերի հան-

